№ 146 Օգոստոսի 22 (Սեպտեմբերի 3) 1880 Օգոստոսի 22 (Սեպտեմբերի 3) № 146

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։ Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի Тифлисъ. Редакція „Мшакъ“

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կանանց ընկերութիւն։—Ներքին տեսութիւն։ Նամակ Երևանից։ Նամակ Ալէքսանդրապօլից։—Արտաքին տեսութիւն։ Հայաստան և Քրդստան։ Գերմանիա։—«Մշակի» հեռագիրներ։—Յայտարարութիւններ։

ԿԱՆԱՆՑ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ժամանակաւոր միջոցներ մեր իգական սեռի բարձրագոյն ուսմանը նպաստելու համար դրական չեն կարող համարվել։ Սիրողների ներկայացումն, կոնցերտ կամ ստորագրութիւն, ինչքան էլ աջող լինէին, այնու ամենայնիւ միմիայն ժամանակաւոր և ոչ թէ մշտական, դրական միջոցներ կարող են համարվել մեր օրիորդներին բարձրագոյն ուսումը մատակարարելու համար։

Մշտական, դրական միջոց կարող է համարվել միայն մի հաստատ ընկերութիւն, որ կը կազմեն իրանց մէջ մեր տիկիններն ու օրիորդները։

Ահա ինչպէս պէտք է կազմվի այդ տեսակ ընկերութիւն։ Մի քանի կանայք թող հաւաքվեն, իւրաքանչիւրը թող պարտաւորվի տարեկան մի յայտնի գումար վճարել, որպէս անդամական վճար, աշխատեն այնուհետև աւելացնել ընկերութեան անդամների թիւը և այդպիսով կազմեն մի դրամագլուխ, որ կը յանձնվի մի բանկային հիմնարկութեանը և որի տոկոսներով, նայելով գումարի մեծութեանը, կը պահվեն մի, երկու կամ աւելի թոշակաւորներ։

Մի և նոյն ժամանակ հիմնական գումարը կարելի է միշտ մեծացնել կողմնակի միջոցներով. այն է ներկայացումներ, կոնցերտներ և խնջոյքներ տալով, դասախօսութիւններ կարդալով և այլն։

Այդ տեսակ ընկերութեան ծրագիրը պէտք է առաջ մշակվի և այնուհետև ներկայացվի կառավարութեան հաստատութեանը։ Ընկերութեան անունը կարող է լինել՝ «իգական սեռի բարձրագոյն ուսմանը նպաստող հայոց ընկերութիւն»։

Ահա այդ օգտակար գործով կարող են զբաղվել այժմ մեր Թիֆլիսի հայ կանայք, որոնք քիչ թէ շատ համակրում են ազգային առաջադիմութեան գործին։

Մեր կանանց մեծ մասը իրանց միշտ հեռու են պահում հասարակական որ և է գործունէութենից. ժամանակ է արդէն որ նրանցից ամենազարգացածներն ու առաջադէմները արթնացնեն իրանց քոյրերի մէջ սէր դէպի հասարակական գործունէութիւնը, զարթեցնեն նրանց մէջ հասարակական ինքնաճանաչութեան զգացմունքը և մինչև այժմ հասարակութեան համար ապարդիւն մնացած ահագին ոյժերը գործ դնեն հասարակութեան ուղղակի շահերի ծառայութեանը։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

12 օգոստոսի

Երևանի թանգագին հնութիւնը, որ իբրև յիշատակարան պահվում էր, այժմ կողոպտված է և մասամբ քարուքանդ արած։ Սորա մասին արդէն մի-երկու անգամ գրվեցաւ «Кавказъ»-ի մէջ։ Այդ յիշատակարանը պարսից ժամանակից մնացած մի փոքրիկ պալատ է, ընկած բերդի հարաւային կողմը, քարափի գլխին, և ուղիղ նայում է Հրազդանի վրա, որի գոռում գոչումը պարզ լսվում է նորա գլխաւոր դահլիճի մէջ։ Դահլիճում եղող պատերի վրա նկարած պատկերները, որոնք ներկայացնում էին Հասան և Հուսէին խան սարդարներին, Ռուստամ-Զալին՝ հայր և որդի պարսկական հերոսներին, Ֆաթալի Շահին և ուր նկարած էին ամենագեղեցիկ կերպով երկու պատերազմական դաշտ և այլ զանազան նկարներ,—այսօր մի քանի չարագործներից բզկտված ու ճղճղոտված թափած են քաղաքային վարչութեան մթերանոցներից մէկում։

„Кавказъ“-ի անյայտ յօդուածագիրը այդ գործում մեղաւոր է դուրս բերում քաղաքային վարչութեանը և ընդհանրապէս խորհրդարանին, որ չափազանց անհոգ և անտարբեր գտնվելով դէպի մի այդպիսի պատմական հնութիւն, թոյլ է տուել ճղճղոտել նորա թանգագին զարդերը, առանց մի որ և է վաստակ ունենալու այդ վարմունքից։ Բայց արդարացի է արդեօք այդ մեղադրանքը։ Ցիրուցաւ, քաղաքային կանոնադրութեան յօդուածների մէջ յիշված է և այն, որ խորհրդարանը պէտք է հսկէ պատմական յիշատակարանների պահպանութեան վրա, բայց ոստիկանական վարչութիւնը սկսեց իշխանութիւն բանեցնել սարդարի այդ պալատի պահպանութեան գործում և մինչև որ վարչութիւնը կը մտածէր ցոյց տալ նորան, թէ որն է նորա գործերի սահմանը, ոստիկանական վարչութիւնը փոխանակ յօնքը ուղղելու, աչքը քոռացրեց։ „Кавказъ“-ի յօդուածագրի խօսքերից երևում է, որ եթէ հնութիւնների պահպանութեան լիազօր իշխանութիւնը տրված լինէր ոստիկանութեանը, այնպիսի անցք, ինչպիսին պալատի աւերումն է՝ երբէք չէր պատահի։ Բայց մենք հարցնում ենք՝ այն ժամանակ, երբ ոստիկանութիւնը հսկում էր այդ պալատի, կամ ինչպէս տեղացիները ասում են «չուշաբանտի» վրա, ինչու նորա ամբողջ հարեմը աւերակ դարձաւ, այն հարեմը, որ երկու անգամ աւելի թանգ արժէր, քան թէ այժմեան պալատի դահլիճը։ Ինչ եղան բերդում եղող մզկիթի և այլ տեղերի բոլոր այն փորագրութիւնները, որ իբրև թանգարանի զարդ պէտք է պահվէին։

Աւելորդ վիճաբանութիւնների մէջ չը պէտք է ընկնել անցեալն անցաւ և մենք խորհուրդ կը տայինք քաղաքային վարչութեանը, որ այսուհետև նա չարունակի իր գործերը միանգամայն այն պրոգրամայով, որ իրան ուղեցոյց է տրված բարեխնամ տէրութիւնից։

Երէկ, օգոստոսի 12-ին կայացած ձայնաւորների նստի մէջ, որոշվեցաւ, որ սարդարի յիշված պալատի նորոգութեան համար գործ դրվի քաղաքային գանձարանից 3000 ռուբլի։ Այդ օրուայ նստի կայանալն այնքան անհրաժեշտ էր, որ Երևանի պ. նահանգապետը, Դարաչիչագից մի քանի անգամ հեռագրելուց յետոյ, ինքն անձամբ եկաւ Երևան, որպէս զի ձայնաւորներին կարողանայ համոզել անպատճառ ներկայ գտնվել նստին այդ հարցը շուտով վճռելու համար։ Օգոստոսի 11-ին եղած նստում կայացաւ և մի այլ վճիռ ինժեներ Տիխօնովի թղթի վերաբերութեամբ, որով նա 9 դեսեատին հող էր ուզում քաղաքացիներից ենթադրելի երկաթուղու իջևանի չինութեան համար։ Խորհրդարանը որոշեց քաղաքապատկան հողից 6 դեսեատին նուիրել առանց վարձատրութեան այդ նպատակին։ Երկաթուղու իջևանի համար որոշված այդ հողն ընկած է այժմ աւերակ բերդի հարաւային կողմը, ռուսաց գերեզմաններից ցած, Շենգաւիթ գիւղից դէպի քաղաք։ Ուրեմն մենք շուտով երկաթուղի ենք ունենալու և այդ պատճառով ընդհանուր ուրախութիւն է տիրում քաղաքում։

Հայ գրականութիւնը Երևանի տպարանական գործից մինչև այժմ ոչինչ օգուտ չէ ստացել։ Տըպարանները կամ պաշտօնական թղթեր և կամ մանր, անհամ բրօշիւրներ տպագրելով են զբաղված եղել։ Այժմ տպագրվում են և շուտով մամուլի տակից դուրս կը գան պ. Խաչատուր Խաչատրեանցի (աշտարակեցի Խաչիկ) «Քնարը» և պ. Վ. Մաղաթեանցի (Նաղմիի) «Կռութ-Կռութը»։ Թէ որքան յաջող կը լինեն և այս յիշեալ գրքերը, հս գուցէ կարողանամ խօսել նրանց տպագրվելուց յետոյ։ Այսքան միայն կարող եմ ասել առ այժմ որ պ. Մաղաթեանցի «Կռութ-Կռութ» կատակերգութիւնը մի ծանր, խորին մտքով գրուածք չէ որ հարուածում է հասարակութեան այս կամ այն արմատացած պակասութիւնը, այլ մի թեթև, չափազանց ծիծաղաշարժ, սկզբից մինչև վերջը մարդուս ուրախ տրամադրող կոմեդիա է, որ բաւական յաջողութիւն ունեցաւ, երբ մի-մի անգամ ներկայացվեցաւ Երևանի բեմի վրա։

Յովհաննէս—Հեթում

ՆԱՄԱԿ ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼԻՑ

Օգոստոսի 14-ին

Մենք վաղուց ի վեր այն համոզմունքն ենք ունեցել, որ «Մեղուն» առանց «Մշակի» անկարող է գոյութիւն ունենալ։ Նորա որ թերթը վերցնես, «Մշակ» անունը կը գտնես մէջը՝, առաջնորդում, ֆելիետօնում, լուրերում և թղթակցութիւններում։ Անկարելի է երևակայել թէ ինչու մրաքումը դրել է միշտ կրծել «Մշակի» ոտները։—Մկները մի յատկութիւն ունեն՝—մինչև նրանք մի որ և է բան չը կրծեն, ատամները կերկարեն և զուրկ լինելով կերակուրներ վայելելու միջոցից՝ կոչնչանան աշխարհս երեսից։—Չը լինի թէ «Մեղուն» էլ մի այսպիսի բան, այսպիսի մի յատկութիւն ունէ....Մինչև «Մշակը» նիթ չէ տալիս, «Մեղուն» չէ գրում ոչինչ։ Օրինակ, «Մեղուի» նիթերը հատել էին. հէնց որ «Մշակը» զարթեցրեց ազգային հարցը—«Մեղուն» մտածեց, որ իր քաղաքագէտ գլխով ինչու ինքը չէ կարողացել այդ անել և շատ ափսոսաց....բայց արդէն ուշ էր. խելքին զօռ տալով՝ գտաւ մի այլ միջոց՝ հարցը աղաւաղեց, դարձրեց կրօնականի և թունդ պաշտպան հանդիսացաւ մեր կրօնին, որպէս թէ «Մշակը» նորա հակառակը լինէր, երկար ժամանակ մըրոտեց ու մրոտեց իր թերթերը՝ ժողովրդի աչքին թոզ փչելով, որովհետև ամբոխը ազէտ է, կարող է նորա համակրութիւնը վայելել դրանով։ Բարեբաղդաբար էլ կան փաստեր, որոնք հիմայ մէջ բերել լրագրութեամբ շատ վաղ է. «Մշակը» այդ չէր անում և «Մեղուն» էլ այդ լաւ գիտենալով փտած կղերի նման մէյդան էր մտել իրան փահլէվան ձևացնելով—և մի քանի համարներում գրեց որ ինքը յաղթող հանդիսացաւ։ Բայց նա այն չէ մտածում, որ մի քանի ժամանակից յետոյ, ապագայ սերունդը նրան պէտք է քարկոծէ, նրա արածը «ազգին վնասել» պէտք է համարէ։ «Մշակը» դարձեալ մի նիթ տուեց «Մեղուին», այդ Ներսիսեան զպրոցի վերաբերութեամբ.... Մի կողմից լաւ է այդ, որովհետև „Մշակը„ մի մարդասիրութիւն, մի ողորմութիւն է որ անում է դրանով «Մեղուին»։—Եւ ճշմարիտ, «Մեղուի» ինչ համարում, «Մշակի» անունը չը կայ, այն համարը զարդակ է, կարդացողի զանէն գնում է։

Ալէքսանդրապօլում կայ «Մեղուի» արբանեակների մի խումբ, որ սարսափելի վրդովված են «Մշակի» դէմ և այն միտքն են յայտնում, թէ «Մշակը» ուզում է մեզ կրօնափոխ անել, բողոքական դարձնել և իբրև իրանց այս ասածին փաստ Բաֆֆիի «Խենթի» երգն են մէջ բերում և աւելացնում, եթէ «Մշակը» չարունակէ այդպիսի յօդուածներ, մենք պատրաստ ենք խնդիր տալ հոգևոր կառավարութեանը, որ նա ևս իր կողմից խնդրէ ուր հարկն է, որ «Մշակը» դադարեցնեն։ Ահա հայ գործող երիտասարդների մի մասի լուսաւոր գլխներից առաջ եկած միտքը։ Բայց մենք չենք զարմանում. երբ է եղել, որ յառաջադէմ գաղափարները չեն հանդիպել ախոյեանների, ճըշմարտութիւն քարոզողները՝ փարիսեցիների։

Այս նամակը գրելով ուզեցի մի նիթ էլ ես տամ «Մեղուին», թող մի երկու համար էլ սրանով լցնէ։

Ճշմարտասէր

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ՔՐԴԱՍՏԱՆ

Ահաւասիկ այն նամակը, զոր Հայաստանի և Քրդաստանի Անգղիական հիւպատոս Պ. Թրօթթը Կարնոյ Առաջնորդ Օրմանեան գեր. Տ. Մաղաքիա Ծ. Վարդապետին ուղղած է ի պատասխանի «Մասիսի» մէջ իրեն վերընծայեալ Քրդամոլական գաղափարաց։

«Տէր իմ. «Մասիսի» Յուլիս 1 թուոյն մէջ հրատարակեալ յօդուածոյ մը վրայ իմ մտադրութիւնս հրաւիրեցին։

Այս յօդուածը ձախող և ստայօդ յարձակում մ'է՝ ուղղեալ նախարար իմ բարեկամիս՝ Տիարպէքիրցի Պօյաճեան Հովսէփ դէմ և երկրորդաբար իմ անձիս դէմ։

«Կը թուի թէ սոյն յօդուածը զրգռեալ և ներշնչեալ է դէշ մարդէ մը, այսինքն հայէ մը՝ որ երբեմն իբր թարգման իմ ծառայութեանս մէջ գտնուած է քանի մ'ամիս։

«Ո՛չ ժամանակ և ո՛չ յօժարութիւն ունիմ վիճաբանելու այն բազմաթիւ կէտերուն նը-կատմամբ՝ որոց վրայ կը խօսի սոյն լրագիրն. իմ նպատակիս համար բաւական է որ ցու-ցանեմ Ձեզ թէ նորա յառաջ բերած ամենա-ծանր ամբաստանութիւնք բացարձակապէս սուտ և անհիմն են:

«1. Իմ հիւպատոսական գաւառաբաժնիս խնդրոյն նկատմամբ՝ որ պաշտօնապէս Քիւր-տիսթան կը յորջորջի, ես արդէն փաստե-րով ապացուցի Ձեր Տէրութեան թէ սոյն տիտղոսն Հիւպատոսարանիս հին տիտղոսն է անդստին ի ժամանակէ Պ. Թէյլերի, յամին 1866: Այս տիտղոսը բնաւ չը փո-խուեցաւ, և երբ զիս, ինչպէս իմ նախորդս ալ, Քրդաստանի Հիւպատոս անուանեցին, ոչ ես և ոչ Պ. Պօյաճեան բառ մ՚արտասանած չէինք կրնար լինիլ այդ խնդրոյն վրայ:

«2. Երբ կապահովացնեմ զՁեզ թէ ոչ երբէք յօդուած մը գրեցի այդ երկիրներուն (Քրդաստան լինելուն) վրայ, ո՛չ Լոնտրայի Աշխարհագրական ընկերութեան, ո՛չ ուրիշ մէկ ընկերութեան և ոչ իսկ որ և իցէ լրագրոյ համար. և թէ ոչ իսկ դիտաւորութիւն ունեցայ երբէք այդպիսի յօդուած մը գրելու, կրնաք իմաստասիրել թէ ո՞րչափ վստահու-թիւն պէտք է տալ «Մասիսին» այս կը սուի-ներուն:

«Բայց որովհետև Պ. Խմբագիրը իմ գէշ անուանած մարդուս համար արժանա-հաւատ Հայ մ՚է կըսէ, կը յայտարարեմ Ձեր Տէրութեան որ եթէ Պ. Խմբագիրը կարենայ փաստերով ցուցնել՝ ինչպէս ինք կը պնդէ՝ որ ինձ վերագրեալ յիմարական խօս-քերուն հեղինակն ես եմ, պատրաստ եմ յիսուն Օսմ. ոսկի տալ երկրիս աղքատներուն, պայմանաւ որ եթէ ինք չը կարենայ հաս-տատել իւր խօսքերն, պարտաւոր լինի տալ յիսուն Օսմ. ոսկի: Կը յայտարարեմ նաև որ Պ. Խմբագրոյն ինձ վերընծայած գրութիւնն, որով Հայաստանի մը գոյութիւնը կ՚ոչնչաց-նեմ եղեր, ստայօդ յերիւրուած մ՚է միայն, և ոչ այլ ինչ:

«3. Պ. Փալկրէյվին նկատմամբ ըրած ան-տեղի ակնարկութեան մտադրութիւն իսկ չեմ ըներ:

«4. Դարձեալ կրնամ զՁեզ ապահովցնել որ երբէք աշխարհացոյց քարտէս մը շինելու չեմ աշխատած Քրդաց և Հայոց բնակեալ տե-ղերն որոշելու նպատակաւ, ոչ իմ կառա-վարութեանս համար, ոչ մէկ ընկերութեան և ոչ ալ իմ անձնական ուսումնասիրութեանս համար:

«5. Քանի որ Պօյաճեան ոչ արտօնութիւն ունէր հեռագրելու Անգլիոյ Արտաքին գոր-ծոց պաշտօնատան և ոչ իսկ, յիրաւի, այս-պիսի գործոց ձեռնամուխ եղած է, աւելորդ կը համարիմ ըսել թէ իրեն դէմ եղած ամբաստանութիւնն, որ մի քանի Եւրոպական բազրաց սխալ տեղեկութեանց վրայ հիմնեալ է, ամենևին հեռի է ճշմարտութենէ՝ յար և նման այն ստաբանութեանց՝ զորս ար-տայայտեցի: «Յիրաւի, Տէր իմ, փափա-քելի էր որ «Մասիսի» Պ. Խմբագիրը փոյթ տանէր չընդունել յարգելի լրագրոյ մը մէջ, որպիսի է իւր լրագիրն, սոյն օրինակ ան-հիմն ամբաստանութիւններ, որք անձնական թշնամութեանց պատճառներով շինուած կե-րևին: Եթէ այս մի քանի տողերս ապագա-յին մէջ արգելուն զինք որ սխալ տեղեկու-թիւններէ հապճեպ եզրակացութեանց չը դիմէ, օգուտ մեծ կ՚ընծայէ իւր ազգին և թերևս չօտարացներ այն անձն, որ յոյժ աշ-խատած է Ձեր հայրենակցաց համար, առանց դժբաղդաբար փափաքուած արդիւնքին հաս-նելու:»

Ահաւասիկ Կարնոյ առաջնորդին պատաս-խանը:

«Պարոն Հաղարապետ. Ընդունեցի Ձեր երէկուան նամակը, վերաբերութեամբ յուլիս 1 թիւ «Մասիսի» մէջ հրատարակեալ յօդուա-ծի մը, զոր դուք «ձախող և ստայօդ յար-ձակումն» մը կը նկատէք նախ Տիարպէքիրցի Պ. Թ. Պօյաճեանի և երկրորդաբար Ձեր ան-ձին դէմ ուղղեալ:

«Ես Պ. Պօյաճեանի անձնական դգացմանց տեղեակ չեմ, որպէս զի իրաց կատարեալ ծանօթութեամբ դատողութիւն մը կարենամ ընել այն յարձակմանց նկատմամբ՝ զորս յի-շեալ լրագիրը կընէ անոր գաղափարաց և հակամիտութեանց դէմ: Կարձանագրեմ Ձեր յայտարարութիւնները վերաբերութեամբ այն իրողութեանց, որոց վրայ խօսուած է յի-շեալ յօդուածին մէջ, և կը տեսնեմ նաև թէ նոյն իսկ «Մասիսի» էջերը բացուած են այն պաշտպանութեանց, զորս Պ. Պօյաճե-նի մի քանի բարեկամք հրապարակաւ ըրած են՝ ի նպաստ անոր, (տես թիւ «Մասիս» ի 6 յուլիս:)

«Գալով Ձեր անձին, չեմ տեսներ որ նա «Մասիսի» մէջ յարձակման մ՚առարկայ եղած լինի, մինչև իսկ երկրորդաբար: Ես անդ բառ մ՚իսկ չեմ գտներ որ նուազ ակնածութիւն ենթադրէ Ձեզ նկատմամբ. եթէ ոչ այն ամբաստանութիւնը թէ Դուք ձեր բարե-կամը կոչած անձին վրայ անսահման վըս-տահութիւն մը ունեցած էք: Ես ըստ բա-ւականին կը ճանչեմ «Մասիսի» Խմբագրապե-տին խոհեմ և շրջահայեաց միտքն. եթէ նա բարեմտութեամբ խաբուած է Հայու մը կողմանէ, որ «գէշ մարդ» է ըստ Ձեզ, և «պատուաւոր և արժանահաւատ անձ մը» ըստ յիշեալ լրագրին, բացորոշապէս կը հաս-կընամ որ «Մասիս» Ձեր անձին նկատմամբ այս համոզումն ստացած է այնպիսի անձէ մը, որ ժամանակին Ձեզ ծառայած և յետոյ բաժնուած էր առանց անպատուիչ միջադէպի մը:

«Երջանիկ եմ իմանալով որ ճշմարիտ և իրական բան մը չը կայ այն անձին խօսքե-րուն մէջ, որ յիշեալ լրագրին տեղեկութիւն տուած էր Հայաստանի Անգղիական հիւ-պատոսարանին «Քիւրտիսթան» տիտղոսին հաստատութեան նկատմամբ, ինչպէս նաև մի և նոյն երկրին վրա Ձեր Վսեմութեան աշխարհագրական կարծեցեալ աշխատութեանց նկատմամբ: «Մասիսի» խմբագիրն և բոլոր Հայք նոյնպէս երջանիկ պիտի լինին լսելով զայս: Բայց, Պ. Հիւպատոս, չէք կրնար չը-դունիլ թէ Հայկական հասարակային կարծեաց բերանն եղող լրագիր մը չէր կրնար անտար-բեր մնալ վիրաւորիչ և վհատեցուցիչ յայ-տարարութեան մը առջև, որպիսի էր այն յայտարարութիւնը զոր «Մասիսի» խմբագրու-թեան կ՚ընէր մարդ մը, որ, իւր խօսքերէն դատելով, եթէ ոչ պաշտօնական, գոնէ պաշ-տօնականի մօտ հանգամանք կը կրէր: Չեմ տարակուսիր թէ «Մասիսի» խմբագրութիւնն, ում պիտի փութամ իմացնել Ձեր անկեղծ և համարձակ յայտարարութիւններն, իւր պարտ-քը պիտի կատարէ Ձեր Վսեմութեան նը-կատմամբ:

«Այն բացատրութիւնը զոր կուտաք ինձ Ձեր Հիւպատոսարանին տիտղոսին վրա, բա-ցատրութիւն մը, որ պաշտօնական ստորա-գրութեան մը ներքև առաջին անգամ հա-ղորդուած պիտի լինի Հայոց,—այդ բացա-տրութիւնը նախկին իրողութեան մը վրա հիմնեալ է: Կաղաչեմ սակայն, Պ. Հիւպա-տոս, որ ներէք ինձ յայտարարել համարձա-կօրէն թէ Ն. Բրիտանական Վեհափառու-թեան Հայաստանի հիւպատոսութիւնն ոչ ևս Պ. Թէյլերի և Պ. Զօհրապի ժամանակուան հիւպատոսութիւնն է: Այն կարևորութիւնը, զոր յիշեալ հիւպատոսութիւնն ստացած է Պէրլինի դաշնագրին 61-րդ յօդուածին և յունիս 4-ի պայմանագրին վրա. այն փայլը, զոր անոր վրա յաւելուլ ուզուեցաւ Ձեր Վսեմութեան նման անձի մը անուանմամբ, և այն վերակազմութիւնն, ում սոյն հիւպա-տոսութիւնն առարկայ եղաւ Կարնոյ և Վանայ փոխ-հիւպատոսութեանց հաստա-տութեամբ.—այս իրողութիւնք բոլորովին նոր երևոյթ մը տուին անոր: Ձեզ պէս բարձր արժանեաց տէր անձի մը յանձնուած հիւ-պատոսութեան նախկին, կամ, ներուի ըսել, հնախօսական տիտղոսը, սովորական գործա-ծութենէ դուրս էր, և ամեն մարդ կանգի-տանար զայն: Մի և նոյն տիտղոսով նոյն հիւպատոսութեան վերստին երևան գալը՝ կծու, չըսեմ հեգնական, բան մ՚ունէր, որ բոլոր Հայ ազգն յուզեց իւր արժանաւոր Գլխին հետ, որ յայնժամ իւր ցաւն հա-մարձակապէս բացատրեց ում որ անկ էր: Անկէց՝ ի վեր վաւերական բացատրութիւն մը չեկաւ Հայոց դիւրազգացութիւնն հանդար-տեցնելու համար, և ազգը միշտ նոյն տա-ւորութեան ներքև մնաց. բնական էր ուրեմն որ «Մասիսի» պէս յարգի և խոհեմ լրագիր մը կրցած է դիւրութեամբ ունկն դնել Ձեր մի նախորդ թարգմանին կարծեցեալ յայտա-բարութեանց:»

«Մեծ հաճոյքով կը տեսնեմ թէ ո՛չ միայն Բրիտանական կառավարութիւնն երբէք Հա-յաստանի մը գոյութիւնը ջնջելու խօսք չէ ըրած, ո՛չ միայն Դուք այս մտօք չէք աշ-խատած որ և է տեսակէտով, այլ նաև, ըստ Ձեզ, այդպիսի գաղափար մը հաստատելու (այսինքն՝ Հայաստանի մը գոյութիւնը ջրելու) միտող խօսքերն «յիմարական խօսքեր» են, և «ստայօդ յերիւրուածի» մ՚արդիւնք են միայն:

«Այն տեսակցութիւնները զորս պատիւ ու-նեցայ Ձեր վսեմութեան հետ ունենալ, և այս երկիրն հասնելով ստացած լուրերս, ՝ի նպաստ իմ հայրենակցաց Ձեր ըրած բարե-սիրական խնամքները գնահատելու կարող կընեն զիս: Անցեալն երաշխաւորութիւն մ՚է ինձ թէ Դուք պիտի շարունակէք քաջապէս պաշտպանել այն խեղճ Հայոց դատն, որոց պաշտպան հանդիսացած էր Պէրլինի Վեհա-ժողովն, և որոց հոգն յատկապէս իւր վրա առնուլ ուզեց Անգղիական կառավարութիւնը պայմանագրութեամբք և մասնաւոր անօրէ-նութեամբք:

«Դուք հրաւիրուած էք, Պ. Հիւպատոս, կարևոր դեր մ՚ունենալ Հայկական խնդրոյն լուծման մէջ, որ այժմ Բ. Դրան և մեծ տէ-րութեանց դեսպաններուն միջև փոխանա-կեալ ծանուցագրաց առարկայն է: Բոլոր Հայոց ուշադրութիւնն այս կէտին վրա դարձած է: Կը սիրեմ յուսալ որ, եթէ Ձեր նախկին ջանքերը փափաքեալ արդիւնքին չառաջնոր-դեցին զՁեզ, ապագայն աւելի յաջող կը լինի թէ՛ Ձեզ և թէ՛ մեզ համար, և իմ հայրենակցաց նկատմամբ Ձեր խնամքներն ու յոգնութիւններն աւելի պտղաբեր կը լինին բարեսիրական և ազգու հսկողութեամբ այն նշանաւոր Մարդոց, որք Ձեր կառավարու-թեան գործոց գլուխն անցած են:

«Ընդունեցէք, Պ. Հիւպատոս, յարգանաց ու բարեկամութեանս անկեղծ հաւաստիքն:»

(Մասիս)

ԳԵՐՄԱՆԻԱ

Գերմանական պաշտօնական լրագիրներուն մէջ տպված է Վիլհելմ կայսրի ճառը, որով նա դիմել է Լուսահարդենի մէջ գվարդիայի 1-ին գունդին:

Պրուսական զօրքերը այսօր տօնում են Սեն-Պրիվայի և Գրավելօտտայի մօտ եղած զե-ղեցիկ պատերազմների տասնամեայ յօբելեանը: Ես իմ շուրջը հաւաքել եմ գվարդիայի 1-ին գունդը, ինչպէս իմ զօրքերի առաջին գունդ ոչ թէ աստիճանով, այլ և այն պատճառով, որ նա ստացաւ այդ տեղը բազմաթիւ պա-տերազմների մէջ: Ցոյս ունեմ, որ գունդը միշտ կը յիշէ այդ օրը և նոյն քաջութիւնը կը ցոյց տայ թէ պատերազմական և թէ խաղաղ ժամանակները: Այսօր ես այդ գուն-դի վրա նայում եմ իբրև բոլոր զօրքերի ներկայացուցչի վրա: Սեն-Պրիվայի և Գրա-վելօտտայի մօտ դժուարութեամբ ձեռք բեր-ված փառաւոր յաղթութիւնը 1870—1871 թուականների պատերազմով ստացված աջո-ղութիւնների պատճառը դարձաւ: Այդ յաղթութիւնը մեծ և ծանր զոհեր պա-հանջեց: Բաւական է այս շրջանի մէջ Ռե-դերի անունը յիշել: Մենք յարգում ենք նրանց բոլորին, որոնք իրանց կեանքը զոհե-ցին հայրենիքի փառքին: (Այս խօսքերը արտասանելու ժամանակ կայսրը հանեց զըլ-խարկը): Իմ սրտից երբէք չի ջնջվի այն քա-ջութեան, հերոսութեան և հաւատարմու-թեան յիշատակը, որով զօրքերը պատերազ-մում էին: Ես դարձեալ շնորհակալութիւն եմ յայտնում զօրքերին իրանց կատարած գեղեցիկ գործերի համար:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 20 օգոստոսի: «Правит. Вѣстн.» լրագիրը հաղորդում է, որ «բարձր Վէլիօ պետական պօլիցիայի դեպարտամենտի դիրեկտոր է նշանակված»: Այսօր, օգոստոսի 20-ին, Նահանգական դատարանը, հիմնվելով երդվեալների այն կարծիքի վրա, որ նախկին երդվեալ հաւատարմատար Եւգենիի Կօրշ մե-ղաւոր է վատնման մէջ և ներողամտութեան արժանի է, վճռեց զրկել նրան բոլոր իրա-ւունքներից և արտաքսել Տօմսկայա նահանգը:

ԿՎԵՏՏԱ, 20 օգոստոսի: Գեներալ Ռօբերտս հասաւ երէկ Կանդահար: Էյուբ-խան փոր-ձեց բանակցութիւններ սկսել: Գեներալ Ֆէ-յեր իր բոլոր ոյժերով առաջ գնաց, որովհե-տև, ինչպէս ասում են, նա պէտք է պատե-րազմի Տակտիպուլի մօտ:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՒԼԱԲԱՐՈՒ Ս. ՄԱՐԻԱՄԵԱՆ օրիորդաց դպրոցի վարչութիւնը պա-տիւ ունի յայտնել յարգոյ հասարակու-թեան, որ աշակերտուհիների ըն-դունելը սկսելով օգոստոսի 20-ից, շարունա-կելու է մինչև Սեպտեմբերի 10-ը, որից յետոյ սկսելու է կանոնաւոր ուսումն: Անցեալ տարի դպրոցը ունէր երկու դասատուն, առաջիկայ տարին կունենայ երեք դասա-տուն:

1—3

ՅՈՎՍԷՓ ԱԼԷՔՍԱՆԴՐԵԱՆ ՄԵԼԻՔ-ԲԷԳԼԱ-ՐԵԱՆԻ ՄԱՍՆԱՒՈՐ ՐԷԱԼԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱ-ՐԱՆԸ (Թիֆլիս, Սադովայա փողոց, տուն Տուտունովի, № 34) յայտնում է, որ լրա-ցուցիչ և ընդունողական քննութիւն-ները կը սկսվեն օգոստոսի 25-ին, իսկ ուսումը սեպտեմբերի 2-ին:

1—4

ԹԻՖԼԻՍԻ ՊՐՕԳԻՄՆԱԶԻԱ ՎԵՐԶԱՑՐԱԾ Հայոց ծխական և մասնաւոր ուսումնարաններ-ում 8 ՏԱՐԻ դասախօսութիւն արած մի ԵՐԻՏԱՍԱՐԴ ներկայ սեպտեմբերի 1-ից ցան-կանում է ՈՒՍՈՒՑՉԻ ՊԱՇՏՕՆ ստանալ բա-ցառապէս ՌՈՒՍԱՑ լեզուից և ԹՈՒՐՔԱՆՈՒ-ԹԵՆԻՑ, ինչպէս Թիֆլիսում, նոյնպէս և գա-ւառներում: Տեղեկանալ ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ կամ ԷՆՖԻԱՆՋԵԱՆՑԻ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՆԵՐՈՒՄ:

15—22

Յուլիսի 1-ից ՎԱՐՇԱՎՍԿԱՅԱ ՊԵԿԱՐՆԻԱ-ՑԻՆ կից կը բացվեն ՍԵՆԵԱԿՆԵՐ, որտեղ կարելի կը լինի ստանալ ԿԱՖԷ, ՇՕԿՕԼԱԴ, ԹԷՅ և պատրաստված հանքային զանազան ԶՐԵՐ:

37—40

Дозволено Цензурою 21 Августа 1880 г. Тифлисъ. Տպարան Ա. Ա. Միխելսօնի Типографія А. А. Михельсона